# ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՐԱՏԻ ԵՍԱՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 15.09.1990

Ծննդավայր՝ ՀՀ, Տավուշի մարզ, գյուղ Տավուշ

Պատմական գիտությունների թեկնածու **Անդրանիկ Արարատի Եսայանը** ծնվել է Տավուշում: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 2007 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

2008-2010 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2013-2015 թթ. ուսումը շարունակել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի՝ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի մագիստրատուրայում:

2016 թ. ընդունվել է ԳԱԱ պատմության ինստիտուտի հեռակա ասպիրանտուրան:

2024 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ Հյուսիսարևելյան Հայաստանի միջնադարյան ժողովրդագրության թեմայով:

2023 թ. աշխատանքի է անցել Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնում որպես ավագ լաբորանտ, ապա կրտսեր գիտաշխատող:

Ա. Եսայանի գիտական հետաքրքրությունները ներառում են միջնադարյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացները, սոցիալ-քաղաքական տարաբնույթ հիմնահարցեր:

Ա. Եսայանը հեղինակ է **1** մենագրության, **8** գիտական հոդվածների, որից՝ **2-ը** ընդգրկված են **Scopus/Webofscience** ՄԳՇ-ում: Գիտական զեկուցումներով հանդես է եկել ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային գիտաժողովներում ու աշխատաժողովներում:

Ա. Եսայանը անկուսակցական է, ամուսնացած է, ունի որդի և երկու դուստր: